


7353



Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

(Հաստատւած ժ. Բնդն. Ժողովին կողմէ)



Ժ Բ Ն Ե Ի

1925

329.14

Հ-24

329.14
2-24

USUՅԿԱԿՆԵ
№ 2813



Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

8

2240

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

(Հաստատւած ժ. Ընդհ. Ժողովին կողմէ)

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ՍՊԵՑԻԱԿԱԿԱՆ ՕՒԴԵԼ

1683

Ժ Ը Ն Ե Ի

1925

2010

2002

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՎԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԱՆԴԱՄՆԵՐ

1. — Հ. Յ. Դաշնակցութեան անդամ կրնայ ըլլալ ամէն քաղաքացի որ կ'ընդունի Կուսակցութեան ճրագիրն ու գործերակերպը, կ'ենթարկուի անոր կանոնադրին և որոշումներուն և մտնելով խումբի մը մէջ, ամէն ջանք կը թափէ իրականացնելու զանոնք:

2. — Իւրաքանչիւր Դաշնակցական պարտաւոր է վճարել կուսակցական տուրք, Շրջանային Ժողովի որոշած սակին համաձայն:

ԱՆՀԱՏ ԳՈՐԾԻՉՆԵՐ

3. — Անհատ գործիչները երկու կարգի կը բաժնուին.

ա) Շրջուն գործիչ (պրօպագանդիստ). բ) Ներկայացուցիչ:

ա) Պրօպագանդիստ կը կոչուի այն գործօն ընկերը որ ընտրուած է Կեդր. Կոմիտէին կողմէ և կամ անոր հաւանութեամբ կը զբաղի պրօպագանդով, անոր շրջանին մէջ: Պրօպագանդիստը կրնայ զբաղիլ նաեւ կազմակերպական գործերով, եթէ լիազօրուած է համապատասխան Մարմիններու կողմէ:

բ) Ներկայացուցիչ կը կոչուի այն գործօն ընկերը որ Մարմնի մը կողմէ կը զրկուի որոշ վայր մը, յատուկ նպատակով և որոշ ժամանակով: (Այս կէտը պէտք է ձշղուի իր վկայականին մէջ):

93455-ԱԶ



1594-2002

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

4. — Հ. Յ. Դ. կազմակերպութեան մէջ կը մտնեն հետեւեալ մարմինները.

- ա) Խուռք,
- բ) Կովիտէ,
- գ) Մեկուսի կովիտէ,
- դ) Կեդրոնական կովիտէ,
- ե) Հայաստանի Պատասխանատու Մարմին,
- զ) Բիւրօ:

Ծանօթութիւն. — Առաջին աստիճանի մարմինները, Կեդր. Կովիտէի որոշումով կարելի է փոխարինել ուրիշ ձեւերով՝ համաձայն տեղական պայմաններու: «Կովիտէ»էն սկսելով կազմակերպական ձեւը պարտաւորիչ է բոլոր տեղերու համար:

5. — Վերոյիշեալ մարմիններու համապատասխան ժողովներն են.

- ա) Խոլքական ժողով.
- բ) Ներկայացուցչական ժողով,
- գ) Շրջանային ժողով,
- դ) Ռայօնական ժողով,
- ե) Ընդհանուր ժողով:

ԽՈՒՄԲ

6. — Հինգ կամ աւելի Դաշնակցականներ միասին կը կազմեն խուռք:

7. — Նոր անդամներ կ'ընդունուին խումբի անդամներու առնուազն երկու երրորդի քուէներով և Կովիտէի վաւերացումով:

Ծանօթ. — Նոր ընդունուած անդամը մինչեւ երեւ ամիս կրնայ

մասնակցիլ միայն խումբի ժողովներուն: Կուսակցական ամբողջական իրաւունքներ կը ստանայ ընդունուելէ երեւ ամիս յետոյ:

ԿՈՄԻՏԷ

8. — Որեւէ շրջան կ'ունենայ Կովիտէ, երբ առնուազն 50 անդամ ունի:

9. — Կովիտէն կը բաղկանայ 3-5 անդամներէ. կ'ընտրուի խումբի ընդհանուր ժողովին կամ ներկայացուցչական ժողովին կողմէ և կը վարէ իր շրջանի կուսակցական գործերը:

10. — Կովիտէն կրնայ տեղական պէտքերու համար ծախսել իր եկամուտին 10 % ը միայն: Մնացածը կը յանձնէ Մեկուսի կամ Կեդրոնական Կովիտէին:

Ծանօթ. — Եկամուտ կը համարուին՝ ա) Կովիտէի գանձը մտած անդամավարները և բ) արդիւնք այն ձեռնարկներուն, որոնք կը կատարուին բարձրագոյն Մարմիններու հրահանգով կամ Կուսակցութեան ընդհանուր նպատակներու անունով:

11. — Կովիտէն պարտաւոր է իր նախաձեռնութեամբ և տեղական կազմակերպական պահանջներու համար կատարուած ձեռնարկներու արդիւնքին 20 % ը յանձնել Կեդր. Կովիտէին:

ՄԵԿՈՒՍԻ ԿՈՄԻՏԷ

12. — Մեկուսի Կովիտէութիւն կը կազմէ այն շրջանը, որ ունի առնուազն 200 անդամ և գտնուելով հեռուոր կամ առանձնացած վայր մը, չի կրնար կապուիլ Կեդր. Կովիտէի մը շրջանին հետ:

13. — Մեկուսի Կովիտէն կը բաղկանայ 5-7 անդամ և կ'ընտրուի իր շրջանի Շրջանային ժողովէն:

14. — Մեկուսի Կովտէն ունի Կեղը. Կովտէի բոլոր պարտականութիւնները և կը վայելէ անոր բոլոր իրաւունքները, բացի սոյն Կանոնագրի 116, 133, 134, 135 Յօդուածներէն:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

15. — Որևէ շրջան կը կազմէ Կեդրոնական Կովտէ-սեռոթիւն, եթէ ունի առնուազն 500 անդամ:

16. — Կեղը. Կովտէն կը բազկանայ 5-7 անդամէ և կ'ընտրուի իր շրջանի Շրջանային Ժողովէն:

17. — Կեղը. Կովտէն իւրաքանչիւր վեց ամիսը մէկ անգամ Բիւրօին կը զրկէ մանրամասն հաշուետու-ութիւն իր գործունէութեան մասին, ինչպէս և Մարմին-ներու ցուցակը:

18. — Կեղը. Կովտէն ունի իր կնիքը « Է. Յ. Դաշնակցութեան X. . . Կեղը. Կովտէ » մակագրու-թեամբ:

19. — Կեղը. Կովտէն կը վարէ իր շրջանի բոլոր գործերը և կը հսկէ իրեն ենթակայ Կովտէներու գոր-ծունէութեան վրայ:

20. — Արտաքին բոլոր յարաբերութիւնները կը կատարուին Կեղը. Կովտէի միջոցով, կամ անոր զե-տութեամբ ու հրահանգով:

21. — Կեղը. Կովտէն իր բոլոր թուղթերը, փաս-տաթուղթերը, յեղափոխական-պատմական նշանակու-թիւն ունեցող գոյքերն ու նամակագրութիւններ Շրջա-նային Ժողովէն յետոյ կը զրկէ Բիւրօին ի պահ:

22. — Կեղը. Կովտէն կը հսկէ որ Կովտէները կուսակցական տուրքը գանձեն Շրջանային Ժողովի որոշման համաձայն, և կը քննէ Կովտէներու զինա-կան, գոյքի և զրամական հաշիւները:

23. — Կեղը. Կովտէն բացի կուսակցական տուր-քերէ, կրնայ ստեղծել եկամուտի ուրիշ աղբիւրներ (հանգանակութիւն, ձեռնարկներ և այլն), Շրջանային Ժողովի որոշման համաձայն:

24. — Իւրաքանչիւր Կեղը. Կովտէ պարտաւոր է իր շրջանին մէջ տարեկան հանգանակութիւն մը կամ ձեռ-նարկ մը կատարել Է. Յ. Դ. Բիւրօին կողմէ նշանակուած օրը (**Պատգանակցութեան Օր**): Ամբողջ արդիւնքը պէտք է ուղարկել Բիւրօին, կազմակերպական և կուսակցական ձեռնարկներու համար: Ամէն ընկեր պարտաւոր է մաս-նակցիլ այդ հանգանակութեան, տրամադրելով առնուազն իր մէկ օրականը:

25. — Կովտէն իրաւունք չունի կազմակերպական զրամներէն գումարներ յատկացնելու քոյր Մարմիններու կամ անհատ ընկերներու:

26. — Կեղը. Կովտէն իր ամբողջ եկամուտին 25%⁰ կը յանձնէ Բիւրօին. իսկ մնացածը կը յատկացնէ Շրջանային Ժողովի կողմէ որոշուած ձեռնարկներու և պէտքերու, համաձայն նախահաշուի:

Ծանօթ. — Յատուկ եկամուտներ կը գործածուին այն նպատակներուն որոնց համար ստացուած են, կամ կը պահուին անձեռնմխելի:

27. — Կեդր. Կոմիտէն տարին երկու անգամ Բիւրօյին կը ներկայացնէ իր շրջանին հաշիւները, սովորական ձեւով կամ Շրջանային Ժողովէն հաստատուած հաշուեցուցակով: Հաշիւները պէտք է վաւերացուած ըլլան. Կեդր. Կոմիտէին կնիքով և առնուազն երեք անգամի ստորագրութեամբ:

28. — Այն Կեդր. Կոմիտէն որ չի կատարեր իր նիւթական պարտականութիւնները և հաշիւ չի ներկայացներ, կը համարուի լուծուած: Բիւրօն (կամ Հայաստանի Պատ. Մարմինը) անոր տեղ կը նշանակէ առժամեայ մարմին մը, որ կը վարէ շրջանին գործերը, մինչեւ նոր Կեդր. Կոմիտէի ընտրութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

29. — Երկրի և անոր ենթակայ շրջաններու Կեդրոնական Գործադիր օրկանն է Հայաստանի Պատասխանատու Մարմինը:

30. — Հայաստանի Պատասխանատու Մարմինը կ'ընտրուի

31. — Հայաստանի Պատասխանատու Մարմնի կեդրոնն է

32. — Հայաստանի Պատասխ. Մարմնի նիստերուն վճռական ձայնի իրաւունքով կը մասնակցին միայն Պատ. Մարմնի անդամները: Վճռական ձայն ունին նաև Բիւրօյի անդամները, եթէ ներկայ ըլլան նիստին:

33. — Հայաստանի Պատասխ. Մարմնի պարտականութիւնն է հետևիլ, որ կանոնաւոր կերպով գործադրուին Ընդհանուր և Ռայօնական Ժողովներու որոշումները, ինչպէս նաև կազմակերպական կանոնները, հսկել, որ Ռայօնական Ժողովը չհակասէ Ընդհանուր Ժողովի որոշումներուն:

34. — Հայաստանի Պատասխ. Մարմինը իր շրջանի կեդրոնական կոմիտէներուն կը հաղորդէ իր գործունէութիւնը:

35. — Հայաստանի Պատասխ. Մարմինը պարբերաբար հաշիւ կը ներկայացնէ Բիւրօին, իր գործունէութեան մասին:

36. — Հայաստանի Պատասխ. Մարմինը, Երկրի Մարմիններու պահանջով, կամ անհրաժեշտ նկատուած պարագային, կ'ուղարկէ ընկերներ, Մարմիններու կազմը ուժեղացնելու համար՝ ձայնի իրաւունքով:

37. — Հայաստանի Պատասխ. Մարմինը կը բաշխէ կուտակեցական եկամուտները՝ համաձայն Ընդհանուր և Ռայօնական Ժողովներու մշակած նախահաշուի:

38. — Երկրի զրամական միջոցները Ընդհանուր և Ռայօնական Ժողովի որոշած սակի համաձայն, կը կեդրոնանան Հայաստանի Պատասխ. Մարմնին մօտ, որ կը հետևի զրամներու գանձման և ծախսման:

39. — Հայաստանի Պատասխ. Մարմինը ամէն տարեկերջի կը քննէ իրեն ենթակայ Մարմիններու հաշիւները և արդիւնքը կը հաղորդէ Երկրի Մարմիններուն և Բիւրօին:

40. — Ընդհանուր Ժողովի կողմէ չնախատեսուած հարցերու լուծման ժամանակ, Հայաստանի Պատասխ. Մարմինը կը գործէ Բիւրոյի հրահանգներուն համաձայն:

41. — Հայաստանի Պատասխ. Մարմինը կը վարէ կուսակցական գործերը, առաջնորդուելով Ընդհանուր Ժողովի որոշումներէն:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԲԻՒՐՕ -

42. — Կուսակցութեան Կեդր. Գործադիր Մարմինն է **Հ. Յ. Դաւենակցութեան Բիւրօն:**

43. — Բիւրօն կ'ընարուի Ընդհ. Ժողովին կողմէ, գաղտնի քուէարկութեամբ և ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ: Կը բաղկանայ հինգ անդամ և երեք փոխանդամ:

44. — Բիւրօն կը հետեւի որ կանոնադրապէս գործադրուին Ընդհանուր, Ռայօնական և Շրջանային Ժողովներու որոշումները, ինչպէս նաեւ կազմակերպական կանոնները: Կը հսկէ որ Ռայօնական և Շրջանային Ժողովները չհակասեն Ընդհ. Ժողովի որոշումներուն:

45. — Բիւրօն Կեդր. Կոմիտէները երազել կը պահէ կուսակցական գործերու ընթացքին և պարբերաբար տեղեկութիւններ կը հաղորդէ անոնց, իր գործունէութեան մասին:

46. — Բիւրօն Կեդր. Կոմիտէներու պահանջով և անհրաժեշտ համարուած պարագային, կ'ուղարկէ ընկերներ, ձայնի իրաւունքով, Կեդր. Կոմիտէներու կազմը զօրացնելու համար:

47. — Բիւրօն կը բաշխէ եկամուտները, համաձայն Ընդհ. Ժողովի մշակած նախահաշուին:

48. — Միայն Բիւրօյին վերապահուած է Մարմիններու համար կնիքներ պատուիրելու և տալու իրաւունքը:

Ծանօթ.— Կնիքներու վրայ կուսակցական զինանշան կրճան գործածել միայն Բիւրօն, Կեդր. և Մեկուսի Կոմիտէներ:

49. — Բոլոր զրամական միջոցները կը կեդրոնանան Բիւրօն մօտ, որ իր կարգին կը հետեւի զրամներու կանոնադր գանձումին և ծախսումին:

50. — Բիւրօն տարուան վերջը կը քննէ իրեն ենթակայ բոլոր Մարմիններու հաշիւները և արդիւնքը կը հաղորդէ Կեդր. Կոմիտէներուն:

51. — Բիւրօն կը պահէ իր որոշումներուն կանոնադր արձանագրութիւնը:

52. — Բիւրօն կը հրատարակէ պաշտօնական օրկաններ. կ'ընէ և ուրիշ հրատարակութիւններ, հայերէն և օտար լեզուներով:

53. — Բիւրօն կը հետեւի որ կուսակցական միւս օրկանները չհակասեն Ընդհ. Ժողովի գծած ուղղութեան:

54. — Իր անդամներուն մէջ աշխատանքի բաժանում պարտադրելով հանդերձ, Բիւրօն հաւաքաբար պատասխանատու է Ընդհ. Ժողովին առջեւ, իր բոլոր գործերուն համար:

ԺՈՂՈՎՆԵՐ

Խմբական ժողով

55. — Խումբի բոլոր անդամներու գումարումը կը կոչուի **Խմբական ժողով**:

56. — Խմբական ժողովը կ'որոշէ իր խումբին բոլոր գործերը:

57. — Խմբական ժողովը կ'ընտրէ իր խումբին համար **խմբապետ**, քարտուղար և գանձապահ-հաւաքիչ, ինչպէս նաեւ ներկայացուցիչ մը՝ ներկայացուցչական ժողովի համար:

Ներկայացուցչական ժողով

58. — Կոմիտէն իր շրջանի գործերը կը վարէ կ'ամ շրջանի բոլոր անդամներու Ընդհանուր Ժողովով, կ'ամ խումբերու ներկայացուցչական ժողովով:

59. — Ներկայացուցչական ժողովը կը կազմուի շրջանի բոլոր խումբերէն ընտրուած ներկայացուցիչներով: Խումբերը ներկայացուցիչներ կուտան իրենց անդամներու թիւին համեմատ: Կոմիտէն կ'որոշէ թէ որքան անդամ մէկ ներկայացուցիչ պիտի տայ:

60. — Ներկայացուցչական ժողովը կը կարգադրէ իր շրջանի բոլոր գործերը, կ'ընտրէ ներկայացուցիչ Շրջանային Ժողովին, ինչպէս և կ'ընտրէ շրջանի համար Կոմիտէ, ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

Շրջանային ժողով

61. — Կեդրոնական Կոմիտէութեան շրջանի բարձրագոյն օրկանն է Շրջանային Ժողովը, որ կը գումարուի ամէն տարի, Կեդր. Կոմիտէին հրաւերով:

Մտօք. — Շրջանային ժողովը կրնայ ունենալ արտակարգ գումարում, Կեդր. Կոմիտէի նրաւերով կամ օրջանի Կոմիտէներու աւանուագն մէկ երրորդին պանակչումով:

62. — Շրջանային ժողովը կը բաղկանայ կոմիտէներու պատգամաւորներէն: Կոմիտէներու պատգամաւոր կուտան շրջանի ընկերները իրենց թիւին համեմատ: Կեդր. Կոմիտէն կ'որոշէ թէ որքան անդամներ կրնան մէկ պատգամաւոր տալ:

63. — Շրջանային ժողովին կը մասնակցին, մէկ-մէկ ձայնով, Կեդր. Կոմիտէն ու Բիւրօն:

64. — Շրջանային ժողովը կ'ընտրէ Կեդր. Կոմիտէ, ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

65. — Շրջանային ժողովը կը կազմէ Կեդր. Կոմիտէի նախահաշիւը, կը քննէ և կը հաստատէ անոր հաշիւները, կը մշակէ ծրագիր յառաջիկայ գործունէութեան համար, համաձայն Ընդհանուր Ժողովի որոշումներուն և կը քննէ ու կը լուծէ շրջանի Մարմիններուն միջեւ ծագած վէճերը:

Ռայօնական ժողով

66. — Երկրի Կեդր. Կոմիտէներու և Շրջանային Ժողովներու ընտրած պատգամաւորներու ընդհանուր ժողովը կը կոչուի **Ռայօնական ժողով**:

Մտօք. — Երկրի օրջանը կը կազմեն Հայաստանը, խորհրդային Երկիրները և Վրէժի օրջանը:

67. — Ռայօնական ժողովը կը հրաւիրէ Հայաստանի Պատասխանատու Մարմինը, համաձայն նախորդ Ռայօնական ժողովի որոշման, կ'ամ ըստ պահանջի:

Ծանօթ. — Արտակարգ պարագաներու մէջ, երբ որեւէ տեղ կարելի չէ գումարել Շրջանային ժողով, Կեդր. Կոմիտէն ինքը կ'ուղարկէ նաեւ Շրջանային ժողովի պատգամաւորները:

68. — Ռայօնական ժողովին կրնան մասնակցել, ձայնի իրաւունքով, նաև Բիւրօի և Հայաստանի Պատասխանատու Մարմնի ներկայացուցիչները, իւրաքանչիւրէն մէկ-մէկ հոգի:

69. — Ռայօնական ժողովը կը համարուի օրինական, երբ ներկայ է պատգամաւորներու կէսէն աւելին, պայմանաւ որ այդ կէսին մէջ ըլլան առնուազն Հայաստանի երկու Կեդր. Կոմիտէութեանց պատգամաւորները:

70. — Ռայօնական ժողովը կը մշակէ իր ընդհանուր շրջանի գործունէութեան ծրագիրը և եղանակը, համաձայն Կուսակցութեան ծրագրի, կանոններու և Ընդհանուր ժողովի որոշումներու տրամադրութեանց:

71. — Ռայօնական ժողովը կ'ընտրէ Հայաստանի Պատասխ. Մարմնի անդամներու այն մասը, որու ընտրութիւնը իրեն է յանձնուած Ընդհ. ժողովին կողմէ:

72. — Ռայօնական ժողովը իր շրջանի բարձրագոյն կուսակցական օրկանն է, և իբր այդ կը քննէ և կը հաստատէ Հայաստանի Պատասխ. Մարմնի գործունէութիւնը և կը մշակէ յետագայ գործունէութեան ծրագիրը:

Ծանօթ. — Հայաստանի Պատասխ. Մարմնի գործունէութեան վերջնական լինութիւնն ու գնահատութիւնը վերապահուած է Ընդհանուր ժողովին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

73. — Հերթական Ընդհ. ժողով հրաւիրելու ժա.

մանակը կ'որոշէ նախորդ Ընդհ. ժողովը. իսկ արտակարգ պարագաներու մէջ կը հրաւիրէ Բիւրօն, Հայաստանի Պատասխ. Մարմնին հետ համախորհուրդ:

74. — Ընդհ. ժողովին կը մասնակցին Բիւրօնէն, Շրջանային ժողովներէն, Կեդր. Կոմիտէներէն, Երկրի և Եւրոպայի դաշնակցական Ռուսանդական Միութիւններէն մէկ-մէկ պատգամաւորներ:

Ծանօթ. — Շրջանային ժողովներ կրնան մէկէ աւելի պատգամաւորներ դրկել, եթէ կը համապատասխանեն մէկէ աւելի Կեդր. Կոմիտէութիւններու օակին, կազմակերպուած անդամներու քուով:

75. — Ընդհ. ժողովը կրնայ դուրսէն ընկերներ հրաւիրել, իր անդամներուն մէկ երրորդին համեմատութեամբ, և խորհրդակցական ձայնի իրաւունքով:

76. — Բոլոր Մարմինները պարտաւոր են վեց ամիս առաջ Բիւրօին դրկել ցանկը այն հարցերուն որոնց համար կը պահանջուի Ընդհ. ժողովի որոշումը: Օգտուելով այդ ցանկերէն, Բիւրօն կը կազմէ օրակարգը և կ'ուղարկէ Մարմիններուն, ժողովէն առնուազն երեք ամիս առաջ, որպէսզի պատգամաւորները բերեն իրենց Մարմիններուն կարծիքները:

77. — Պատգամաւորները իրաւունք ունին առաջարկելու նոր հարցեր, որոնք նկատի կ'առնուին պաշտօնական օրակարգի հարցերու քննութենէն յետոյ:

78. — Պատգամաւորները ձայն կուտան իրենց հայեցողութեամբ:

79. — Բիւրօի և Կեդր. Կոմիտէներու պատգամա-

ւորները պարտաւոր են Ընդհ. Ժողովին ներկայացնել
զրաւոր զեկուցում և հաշուետուութիւն, հաստատուած
իրենց Մարմիններու կնիքով և ստորագրութեամբ: Այս
պայմանը չլրացնող պատգամաւորները կը զրկուին
ձայնի իրաւունքէն և Ժողովին կը մասնակցին խորհր-
դակցական ձայնով:

80. — Իւրաքանչիւր պատգամաւոր պարտաւոր է
իր հետ բերել իր շրջանի մեծամասնութեան և փոքրա-
մասնութեան կարծիքները:

81. — Ընդհ. Ժողովը օրինաւոր կը համարուի, երբ
ներկայ է պատգամաւորներու 2/3 ը:

82. — Ընդհ. Ժողովը ծրագրային և կանոնադրական
հարցերը կը վճռէ ներկաներու երկու երրորդի մեծա-
մասնութեամբ:

83. — Իւրաքանչիւր պատգամաւոր ունի միայն
մէկ ձայն:

84. — Պատգամաւորը չի կրնար ուրիշին տալ իր
ձայնը, առանց իր մարմնին հաւանութեան:

85. — Ընդհ. Ժողովի որոշումները կը համարուին
վերջնական, երբ բոլոր ատենագրութիւնները կը ստո-
րագրուին և ժողովը կը յայտարարուի փակուած:

86. — Ընդհ. Ժողովը չի կրնար հիմնական փոփո-
խութիւններ կատարել Հ. Յ. Դաշնակցութեան նպատակ-
ներուն և կազմակերպութեան սխառտման մէջ, եթէ այդ
հարցերը նախապէս չեն յանձնուած Կեդր. Կոմիտէներու
քննութեան:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

87. — Հ. Յ. Դաշնակցութեան զրամական միջոց-
ները կը կազմեն Ա. Անդամավճարներ. Բ. Հանգանա-
կութիւն. Գ. Նուէրներ. Դ. Զանազան ձեռնարկներէ
գոյացած գումարներ. Ե. Պատահական եկամուտներ:

Ծանօթ. — Իւրաքանչիւր Դաշնակցական պարտաւոր է ու-
նենալ անդամատեք եւ իր անդամավճարներու փոխարէն պէտք է
ստանայ դրամաքիւշեր, որոնք պիտի փակցուին անդամատեքի
նամապատասխան տեղը: Իրաւաքիւշերու գործածութիւնը պար-
տաւորիչ չէ այն տեղերը ուր նմարաւորութիւն չկայ:

88. — Բոլոր Դաշնակցական ընկերները, առանց
բացառութիւն նկատելու Երկիրը, պարտաւոր են տալ
անդամավճար, տեղական շրջանային Ժողովներու որոշած
սակին համեմատ:

89. — Իւրաքանչիւր Դաշնակցական պարտաւոր է
ամէն ամիս տեղական Մարմնի սնտուկը յանձնել իր
տուրքը:

Ծանօթ. — Այն դաշնակցական ընկերը որ ետք ամիս օւ-
րունակ չի վճարէ իր անդամավճարը, կը զրկուի ձայնի եւ
ընտրուելու իրաւունքէն:

90. — Դրամի հանգանակութեան իրաւունքը վե-
րապահուած է միայն Բիւրօին, Հայաստանի Պատաս-
խանատու Մարմնին և Կեդր. Կոմիտէներուն:

Հաւուս ապահովութիւն

91. — Իւրաքանչիւր Դաշնակցական Մարմին պար-
տաւոր է երեք ամիսը անգամ մը վճարել իր վրայ
դրուած կուսակցական սակը:

104261
2002-4651



92. — Իւրաքանչիւր Մարմին պարտաւոր է իր ստացած գումարին համար տալ կնքուած ընկալագիր, զանձապահին ստորագրութեամբ:

93. — Բոլոր Մարմինները պարտաւոր են իրենց հաշիւները պահել կանոնաւոր հաշուակալութեան ձեւով:

94. — Իւրաքանչիւր Մարմին պարտաւոր է երեք ամիսը անգամ մը ներկայացնել իր հաշիւները գերադաս Մարմինին, հաշուապահական ձեւով:

Ծանօթ. — Կեդր. Կոմիտէները իրենց հաշիւները կ'ուղարկեն Բիւրօին կամ Հայաստանի Պատասխանատու Մարմինին, վեց ամիսը անգամ մը:

95. — Բոլոր Մարմինները պարտաւոր են իրենց տարեկան հաշիւները փակել Դեկտ. 31ին և տարեկան հաշիւը հաղորդել գերադաս Մարմինին, ներկայացնելով ա. Հաշուեկշիռ, ք. Մուտքի և Ելքի օրհաշիւ (Մատուկի տետրակ), գ. Գոյքերու ցուցակ (*եկվանթեր*), ուր պէտք է մանրամասն յիշել գոյքերու գնման իսկական և օրուան մօտաւոր արժէքը:

Ծանօթ. — Բիւրօի կամ Հայաստանի Պատասխանատու Մարմինի հաւանութեամբ, ի հարկին կարելի է ընդունիլ նաեւ ուրիշ ձեւ մը, համաձայն տեղական պայմաններու:

96. — Բիւրօն պարտաւոր է պահել զլիսաւոր հաշուեմատեան մը, ուր պիտի արձանագրուի Կեդր. Կոմիտէներու մուտքն ու ելքը, համաձայն պարբերաբար հասած հաշիւներու:

97. — Բիւրօն պէտք է ունենայ Մարմիններու ելումուտքի արձանագրութեան տետրակ, ուր գումար-

ները պէտք է բաժնուին համաձայն նախահաշուի:

98. — Այն Մարմինները որոնք չեն կրնար երկարատեան պահել հաշուեմատեանները, քաղաքական պատճառներով, պէտք է հաշիւները ղրկեն Բիւրօին, առանց սպասելու եռամսեայ կամ վեցամսեայ հաշուետուութեան:

99. — Արգիլուած է ո՛ր և է հիմնադրամ (ֆոնտ) գործածել ուրիշ նպատակի:

100. — Արգիլուած է կուսակցական միջոցներէ ո՛ր և է մէկուն դրամ՝ տալ իբրեւ փոխ, կամ իբրեւ նպաստ, կամ շահադիտական նպատակներով:

101. — Բիւրօն կը մշակէ հաշուապահական ընդհանուր հրահանգներ՝ պարտաւորիչ Կեդր. Կոմիտէներու համար, համաձայն Ընդհ. Ժողովի որոշումներուն:

102. — Փոխառութեան իրաւունքը վերապահուած է միայն Բիւրօին և Կեդր. Կոմիտէներուն:

103. — Փոխառութիւնը կը կատարուի Մարմնի անդամներու անձնական պատասխանատուութեամբ, բայց ոչ Կազմակերպութեան անունով:

104. — Բիւրօն ընդհանուր եկամուտին 50/0ը կը մտայ սնտուկը, յեղափոխական հիմնադրամ կազմելու համար: Այդ գումարին գործածութիւնը վերապահուած է Ընդհ. Ժողովին:

ՄԱՐՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐ

105. — Յեղափոխական շրջաններու մէջ իր ձեռնարկներուն յաջողութեան համար, Կուսակցութիւնը, կը կազմակերպէ մարտական խումբեր, գաշակցական ընկերներէ:

106. — Մարտական խումբերը կ'ենթարկուին տե-

ղական Մարմիններու և Բիւրօի հրահանգներուն:

107. — Մարտական խումբի իւրաքանչիւր անդամ պարտաւոր է ապրիլ իր սեփական միջոցներով, ունենալ սեփական զէնք և միշտ պատրաստ ըլլալ յեզրափոխական ձեռնարկներու համար:

108. — Մարտական խումբի անդամները իրենց յանձնուած գործի կատարման միջոցին ապրուստ կը ստանան Կուսակցութենէն:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

109. — Երկրի և Եւրոպայի Դաշնակցական ուսանողական խումբերը կրնան կազմել Ուսանողական Միութիւններ:

110. — Դաշնակցական Ուսանողական Միութիւնները երկու են Ա. Երկրի. Բ. Եւրոպայի: Առաջինը կապ կը պահէ Հայաստանի Պատ. Մարմին, իսկ երկրորդը Հ. Յ. Դ. Բիւրօին հետ:

Ծանօթ.— Եթէ Ամերիկայի եւ Սուրիոյ մէջ եւս կազմուին Ուսանողական Միութիւններ, կ'ենթարկուին իրենց օրջանի Կեդր. Կոմիտէներուն:

111. — Իւրաքանչիւր Ուսանողական Միութիւն իբրև առանձին օրկան, Բիւրօի, Հայաստանի Պատասխ. Մարմնի և քոյր միութիւններու հետ կապ պահելով հանդերձ, ենթակայ է իր շրջանի կազմակերպութեան և պարտաւոր է գործնապէս մասնակցիլ անոր աշխատանքներուն:

112. — Երկրի և Եւրոպայի Ուսանողական Միութիւնները իրաւունք ունին Ընդհ. Ժողովին մէկ-մէկ պատ-

գամաւոր տալու, եթէ իւրաքանչիւրին մէջ կազմակերպուած անդամներուն թիւը կը հասնի եօթնասուունհինգի:
ՄԱՄՈՒՆ

113. — Դաշնակցական մամուլը պարտաւոր է հաւատարմօրէն հետեւիլ Կուսակցութեան ծրագրին և տարածել անոր գաղափարները:

114. — Կեդրոնական օրկանը, «Դրօշակ», կ'առաջնորդուի Ընդհ. Ժողովէն արուած հրահանգներով: Թերթը կը վարեն Բիւրօէն ընտրուած խմբագիրներ:

115. — Ռայօնական Ժողովը իրաւունք ունի հիմնելու իր Ռայօնի պաշտօնական օրկանը, ապով անոր յատուկ հրահանգներ, ի հարկին և զրամական միջոցներ, առանց անցնելու Ընդհ. Ժողովի դժած նախահաշիւը:

116. — Կեդր. Կոմիտէներն ալ կրնան իրենց շըրջանին մէջ հրատարակել կուսակցական թերթ, առանց ուղղակի բեռ ըլլալու Կուսակցութեան վրայ:

117. — Կուսակցական բոլոր թերթերը պարտաւոր են առաջնորդուիլ Կազմակերպութեան ծրագրով և Ընդհանուր Ժողովի որոշումներով: Կեդր. օրկանի ուղղութիւնն ու արձարձած հայեացքները հիմնական հարցերու մասին՝ պարտաւորիչ են կուսակցական բոլոր թերթերու համար:

118. — Բիւրօն և Հայաստանի Պատասխանատու Մարմինը կը հսկեն Կուսակցական թերթերու ուղղութեան վրայ, և կրնան ոչ-դաշնակցական յայտարարել այն օրկանը որ կը շեղի Կուսակցութեան ծրագրէն և Ընդհ. Ժողովի որոշումներէն:

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ

119. — Կազմակերպութեան ամէն անդամ կամ կուսակցական սր և է մարմնի կամ ժողովի իւրաքանչիւր փոքրամասնութիւն, պարտաւոր է ենթարկուիլ մեծամասնութեան կամ համապատասխան բարձր մարմնի որոշումներուն. հակառակ պարագային հրաժարած կը համարուի տեղական գործերէ և կ'ենթարկուի կուսակցական պատասխանատուութեան:

120. — Դաշնակցական Մարմին մը՝ որոշումներու անաստորներուն հետ բանակցութեան կրնայ մտնել միայն որոշում տուող մարմնին թույլտուութեամբ:

121. — Մարմին մը չի կրնար ուրիշ մարմնի մը շրջանին մէջ սր և է ձեռնարկ կատարել, առանց վերջինի գիտութեան:

122. — Շրջանի մը բարձրագոյն Մարմինը կրնայ լուծուած համարել ստորադաս սր և է Մարմին, եթէ անոր անդամներուն մեծամասնութիւնը պակսի:

ԴԱՏԱԿԱՆ

123. — Իւրաքանչիւր Դաշնակցական Մարմին կրնայ իր անդամները ենթարկել կարգապահական պատժի:

124. — Ամէն պատժական որոշում պէտք է տրուի անդամներու երկու երրորդի ձայնով:

125. — Ծանր յանցանքներու պարագային, Մարմինը անմիջապէս կը հեռացնէ յանցաւորը, յայտնելով գերադաս Մարմնին:

126. — Ամէն հեռացում որ կը հաստատուի Կեդր.

Կոմիտէին կողմէ, կը համարուի վերջնական, եթէ բողոք չկայ տրուած որոշման դէմ: Բողոքել կարելի է Շրջանային ժողովին, որուն վճիռը վերջնական է:

127. — Կեդր. Կոմիտէն պարտաւոր է լսել անբաստանեալը, տալով անոր պաշտպանուելու հնարաւորութիւն:

Ծանօթ.— Ամբաստանեալին վերջնական հետացման վճիռը կը հրատարակուի Կեդրոնական օրկանին մէջ:

128. — Բիւրօն և Հայաստանի Պատասխանատու Մարմինը իրաւունք ունին լուծուած համարելու Կեդր. Կոմիտէ մը, եթէ ան խախտէ կազմակերպական կանոնները:

129. — Կուսակցական շարքերէն հեռացած անդամի մասին պէտք է տեղեկութիւն հաղորդուի Բիւրօին և բոլոր մարմիններուն:

130. — Կուսակցական շարքերէն հեռացած անդամը չի կրնար ընդունուիլ ուրիշ մարմնի մէջ, մինչև վերջնական վճիռը:

Ծանօթ.— Եթէ հեռացուած անդամը զգաստանայ. կրնայ վերընդունուիլ հետացեող Մարմնին հաւանութեամբ միայն:

131. — Առանձնապէս կարեւոր նկատուած պարագաներու մէջ, Բիւրօն կրնայ կազմել Դատական Ատեան, որուն վճիռը վերջնական է: Բնութեան ենթարկուած գործը լրանալէ յետոյ, Դատական Ատեանը կը լուծուի:

132. — Դաշնակցականներու և ուրիշ կուսակցականներու կամ խմբակցութիւններու միջև ծագած

կուսակցական վեճերը կը յանձնուին միջկուսակցական
ատենանի:

ԱՀԱՐԵԿՈՒՄ


133. — Ահաբեկումը երկու տեսակ է, քաղաքա-
կան և կազմակերպական:

134. — Ահաբեկման կրնան դատապարտել միայն
Կեդր. Կոմիտեաները և Բիւրօն կամ Հայաստանի Պա-
տասխանատու Մարմինը: Վճիռները պէտք է արուին
միաձայն:

135. — Կազմակերպական ծանր զեղծումը (զէների
և դրամի խրատում), ընկերասպանութեան, լրտեսու-
թեան և դաւաճանութեան պարագային, կարելի է մահա-
պատժի դատապարտել միայն այն ժամանակ, երբ
հաւանութիւն կը ստացուի ուրիշ Մարմինէ մը՝ Բիւրօնէ,
Հայաստանի Պատասխանատու Մարմինէն կամ հարեւան
Կեդր. Կոմիտէէն:

Ծանօթ. — Եթէ մահապատժի դատապարտուած անհար անա-
բեկման չենքարկուիր այն Կեդր. Կոմիտէին կողմէ որու օրջանին
մէջ կը գտնուի, Կեդր. Կոմիտէն պատասխանատու կը մնայ Ընդհ.
Ժողովին առջեւ:

136. — Ներկայ կանոնադրը կրնայ փոփոխուիլ,
կրճատուիլ կամ լրացուիլ միայն Ընդհ. Ժողովին կողմէ:



2013

« Ազգային գրադարան »



NL0040718

